Յօդուածի թեման՝ այն իշխանութեան սահմաններն ու բնոյթը, որը լեգիտիմօրէն կարող է կիրառուել հասարակութեան կողմից անհատի նկատմամբ

Կառավարողները պէտք է ասոցացուած լինէն ժողովրդի հետ, իրենց շահն ու կամքը պէտք է լինի ազգի շահն ու կամքը:

Կառավարողների իշխանութիւնը ազգի սեփական իշխանութիւնն էր՝ կենտրոնացուած կիրառման համար նպատակայարմար ձեւում:

“Ժողովուրդը”, որն իրականացնում է իշխանութիւնը ոչ միշտ է հանդիսանում նոյն այն ժողովուրդը, որի նկատմամբ այն իրականացւում է: Եւ “ինքնակառավարումը”, որի մասին խօսք է գնում, իւրաքանչիւր անհատի կառավարումը չէ ինքն իր կողմից, այլ իւրաքանչիւր անհատի կառավարումը բոլորի կողմից:

“Մեծամասնութեան բռնատիրութիւնը” այժմ ընդհանուր առմամբ ընդգրկուած է այն չարիքների շարքում, որից պէտք է պաշտպանուի հասարակութիւնը:

Միակ նպատակը, որով մարդկութիւնը, ինքնուրոյն կամ հաւաքական կազմով, լիազօրուած է միջամտելու իրենց կազմից որեւէ մէկի գործելու ազատութեանը, ինքնապաշտպանութիւնն է: Միակ պատճառը, որով արդարացիօրէն կարող է իշխանութիւն կիրառուել քաղաքակրթուած համայնքի որեւէ անդամի նկատմամբ վերջինիս կամքին հակառակ, այլոց վնաս պատճառելը կանխելն է: Սեփական բարիքը, լինի այն ֆիզիկական թէ բարոյական, բաւարար արդարացում չէ: Նա չի կարող արդարացիօրէն հարկադրուած լինի կատարելու կամ կատարելուց հրաժարուելու որովհետեւ այդպէս նրա համար աւելի լաւ կլնի, որովհետեւ դա նրան կը դարձնի աւելի երջանիկ, որովհետէեւ այլոց կարծիքով, նման կերպ վարուելը կը լինի խելացի, կամ նոյնիսկ ճիշտ: Սրանք լաւ պատճառներ էն նրան հակառակը համոզելու, կամ նրա հետ տրամաբանելու, կամ նրան աղաչելու, բայց ոչ նրան հարկադրելու:

Ազատութիւնն իբրեւ սկզբունք չի կարող առնչուել այնպիսի իրադրութեան հետ, որը նախորդել է այն ժամանակին, երբ մարդկութիւնը ունակ դարձաւ զարգանալու ազատ եւ հաւասար քննարկման միջոցով:

Մարդկութիւնն աւելի շատ կը շահի, եթէ հանդուրժի միմեանց ապրել այնպէս, ինչպէս իրենց է լաւ թւում, քան հարկադրի ապրել այնպէս, ինչպէս մնացածին է լաւ թւում:

Եթէ ողջ մարդկութիւնը, բացառութեամբ մէկ հոգու, մի կարծիքի լինէր, եւ միայն մէկ հոգի հակադիր կ'արժիքի լինէր, մարդկութեան կողմից այդ մէկ հոգուն լռեցնելը ոչ մի կերպ աւելի արդարացուած չէր լինի, քան այդ մէկ անձի կողմից մնացած մարդկութեան լռեցնելը, եթէ նա ունենար նման իշխանութիւն:

Շատ քչերն էն անհրաժեշտ համարում զգուշանալու իրենց իսկ սխալականութիւնից:

Մարդիկ, եւ կառավարութիւնները, պէտք է գործեն իրենց կարողութիւնների առաւելագոյն չափով:

Ցանկացած հարցի շուրջ, որն ինքնաբացայայտ չէ, 99 հոգու դիմաց, որը բացարձակապէս անկարող այդ հարցը քննելու, կայ միայն մէկ հոգի, որն ունակ է նման գործողութեան, եւ այս 100-րդ անձի նման ունակութիւնը լոկ յարաբերական է: Քանզի ամէն անցած սերնդում ապրած ակնառու մարդկանց մեծ մասը այնպիսի տեսակէտներ է փայփայել, որոնք այսօր համարւում էն սխալ, եւ կատարել կամ համաձայնութիւն տուել բազում բաների, որոնք այսօր ոչ մէկ չի արդարացնի:

Մենք կատարել ենք առաւելագոյնը/լաւագոյնը, որ մարդկային բանականութիւնը առկայ վիճակը թուլատրում է:

Ճշմարտութիւնը կարծիքի օգտագործելիութեան/օգտակարութեան մի մասն է:

Մեր սոսկ հասարակական անհանդուրժողականութիւնը չի սպանում ոչ մէկի, եւ արմատախիլ չի անում ոչ մի կարծիք, այլ ստիպում է մարդկանց քօղարկել դրանք, կամ ձեռնպահ մնալ դրանք տարածելու որեւէ ակտիւ ջանքի գործադրումից:

Հարկաւոր է պաշտպանուածութիւն նաեւ գերակայող կարծիքի եւ զգացմունքի բռնատիրութիւնից, պաշտպանութիւն հասարակութեան միտումից պարտադրելու, քաղաքացիական պատիժներից զատ միջոցներով, իր սեփական մտքերը եւ գործունէութիւնը որպէս վարքի կանոններ բոլոր նրանց, ովքեր հակադրւում էն դրանց: Առկայ է սահման անհատական ազատութեանը հաւաքական կարծիքի լեգիտիմ միջամտութեան: Եւ այդ սահմանի բացայայտումը եւ պահպանումն ընդդէմ ոտնահարման, մարդկային յարաբերութիւնների լաւ վիճակի համար նոյնքան անփոխարինելի է, ինչքան պաշտպանուածութիւնը քաղաքական բռնակալութիւնից:

Իր նկատմամբ, իր սեփական մարմնի եւ մտքի նկատմամբ, անհատն ինքնիշխան է:

Հալածանքը մի բարդ փորձութիւն է, որի միջով ճշմարտութիւնը պէտք է անցնի, եւ որի միջով այն միշտ յաջողութեամբ անցնում է՝ իրաւական պատիժները, ի վերջոյ, լինելով անզօր ընդդէմ ճշմարտութեան, սակայն երբեմն օգտակար հակազդեցութիւն գործի վնասակար սխալների դէմ: (Միլը այնուհետեւ հերքում է այս պնդման համընդհանրականութիւնը:)

p.27
p.32-33

Ինչքան էլ ճշմարիտ այն [կարծիքը] լինի, եթէ այն ամբողջութեամբ, յաճախ, եւ խիզախօրէն չի քննարկւում, այն կը պահպանուի իբրեւ մեռեալ դոգմա, եւ ոչ իբրեւ կենդանի ճշմարտութիւն:

p.35

Հին դարերի լաւագոյն հռետորը արձանագրել է, որ նա միշտ ուսումնասիրել է իր հակառակորդի փաստարկներն նոյն, եթէ ոչ աւելի շատ, խորութեամբ, քան իրենը:

p.36

Քննարկման բացակայութեան պարագայում բառերը որոնք փոխանցում էն [ճշմարտութիւնը] դադարում էն մտքէր յայտնելուց, կամ արտայայտում էն միայն մի փոքր հատուածը այն մտքերի, որոնք ի սկզբանէ պէտք է հաղորդէին: Վառ հասկացողութեան եւ կենդանի հաւատքի փոխարէն, կրկնողութեան միջոցով պահպանւում էն լոկ մի քանի բառակապակցութիւն: Կամ, եթէ ինչ-որ բան նոյնիսկ պահպանւում է, դա իմաստի միայն կեղեւն է, իսկ հիմնական մասը կորչում է:
Ժառանգական հաւատքների դէպքում, որոնք ընդունւում էն պասիւ կերպով, եւ ոչ ակտիւ, երբ ուղեղն այլեւս շահագրգռուած չէ նախկինի պէս գործի դնելու իր կենսական ուժերը իր հաւատքի առաջադրած հարցերի շուրջ, կայ զարգացող միտում մոռանալու ամբողջ հաւատքը բացառութեամբ բանաձեւումների, կամ տալու նրան անտարբեր համաձայնութիւն, իբր ընդունելով այն, վստահելով փոխարինում է կուրօրէն դրան անձնական փորձութեամբ փորձելու կարիքը կամ դրան գիտակցաբարըմբռնելու անհրաժեշտութիւնը:

p.38-40

Եւ՛ ուսուցիչները, եւ՛ սովորողները գնում էն քնելու իրենց դիրքերում երբ տարածքում ոչ մի թշնամի չի լինում:

Գոյութիւն ունէն բազմաթիւ ճշմարտութիւններ, որոնց ամբողջ իմաստը հնարաւոր չէ գիտակցել մինչեւ որ այն չընկալուի անձնական փորձի միջոցով:

Մարդու բնոյթը մեքենայ չէ, որ կառուցուի ինչ-որ մոդելի հիման վրայ եւ յանձնարարուի կատարելու այն աշխատանքը, որն իրէն է յատկացուած, այլ ծառ է, որը պէտք է աճի եւ զարգանայ բազմակողմանիօրէն , իր ներքին ուժերի հակումներին համահունչ, որոնք էլ դարձնում էն նրան կենդանի:

Մարդկութեան մահաբեր սխալների կէսի պատճառն է հանդիսանում որեւէ երեւոյթի մասին չմտածելու այն հակումը, երբ այն այլեւս կասկածելի չէ:

p.42

Բախուող դոկտրինաները, մէկը ճշմարին եւ միւսը սխալ լինելու փոխարէն, ճշմարտութիւնը կիսում էն միմեանց միջեւ: Ժողովրդական կարծիքները զգայարանների համար ոչ շօշափելի հարցերի շուրջ, յաճախ ճշմարիտ էն, բայց սակաւ կամ երբեք չէն լինում ամբողջութեամբ ճշմարիտ : Մարդու մտքում միակողմանիութիւնն է միշտ գերակշռել:

p.44-5

Մարդկային ինտելեկտի առկայ վիճակում միայն կարծիքի բազմազանութեան միջոցով է, որ գոյութիւն ունի հնարաւորութիւն ըմբռնելու ճշմարտութեան բոլոր կողմերը:

p.46

Մարդու նպատակը իր ուժերի ամբողջական եւ լիարժէք զարգացումն է: Սրա համար կայ երկու նախապայման՝ ազատութիւն, եւ իրաղրութիւնների բազմազանութիւն/տեսականի:

p.54-5

Հանճարեղ մարդիկ նեղ փոքրամասնութիւն էն կազմում: Բայց նման հանճարներ ունենալու համար, հարկաւոր է պահպանել այն հողը, որի մէջ աճում էն: Հանճարը կարող է ազատօրէն շնչել միայն ազատութեան մթնոլորտում:

Օրիգինալութիւնը միակ բանն է, որի օգուտը հասարակ ուղեղները չէն կարող զգալ:

p.61

Քանի որ կարծիքի բռնատիրութիւնը հակակրանք է առաջացնում անօրինակութեան նկատմամբ, ցանկալի է, որ այդ բռնատիրութիւնը ջարդելու

նպատակով մարդիկ լինէն անօրինակ: Անօրինակութիւնը առատ է եղել այնտեղ եւ երբ, որ բնաւորութեան ուժն է առատ եղել:

p.63

Եթէ անձն ընդունելի չափով ունի բանականութիւն եւ փորձառութիւն, գոյութիւնը զարգացնելու իր մեթոդը լաւագոյնն է, ոչ թէ այն պատճառով, որ այն ինքնին լաւագոյնն է, այլ որովհետեւ դա իր սեփական մեթոդն է:

p.64

Բարելաւուելու/զարգանալու միակ մշտական աղբիւրը ազատութիւնն է, քանզի նրանով առկայ է հնարաւորինս այնքան զարգացման անկախ կենտրոններ, որքան որ անհատներ կան:

p.66

Սակայն հանրութեան միջամտութեան դէմ ամենաուժեղ փաստարկը, որն առնչւում է զուտ անձնական վարքի հետ, այն է, որ երբ այն միջամտում է, հաւանականութիւնը շատ է, որ այն սխալ միջամտութիւն է ցոյց տալիս, եւ սխալ վայրում:

p.78

Էս տեղեակ չեմ, թէ որեւէ համայնք իրաւունք ունի ստիպելու միւսին քաղաքակիրթ լինելու, այնքան ժամանակ, որքան որ վատ օրէնքներից տանջուողները չէն հայցում աջակցութիւն այլ համայնքներից:

p.83

Անհատը հաշուետու չէ հասարակութեանը իր գործողութիւնների համար, որքանով որ դրանք վերաբերում էն ոչ մէկի շահերին բացի իրենից:

Խրատ, ցուցում, համոզմունք եւ խուսափում այլ մարդկանց կողմից միակ միջոցներն էն, որով հասարակութիւնը արդարացիօրէն կարօն է արտայայտել իր հակակրանքը կամ անհամաձայնութիւնը անհատի վարքի հանդէպ:

p.87

Այնտեղ, որտեղ ամէն ինչ կատարւում է բիւրոկտրատիայի միջոցով, այն ամէնը, ինչին իսկապէս դէմ է բիւրոկրատիան, չի կարող երբեւէ իրականացուել:
Պետութեան արժէքը, ի վերջոյ, այն անձանց արժէքն է, որոնցից բաղկացած է: Մի պետութիւն, որը ճնշում է իր մարդկանց, որպէսզի նրանք դառնան աւելի հեշտ կառավարելի գործիքներ իր ձեռքերում, նոյնիսկ օգտակար նպատակներով, կը հասկանայ, որ փոքր մարդկանցով ոչ մի մեծ բան չի կարող նուաճուել: *Եւ մեքենայի կատարելութիւնը, որի համար զոհաբերել է*

ամէն ինչ, վերջում իրէն ոչ մի օգուտ չի բերի, յանուն այն կենսական ուժի, որը, որպէսզի մեքենան աւելի սահուն գործի, այն նախընտրել է արգելել: